ԳՈՒՐԳԵՆ ԳԵՂԱՄՅԱՆ

Հայ պատմագիտությունը ծանր կորուստ կրեց: Կյանքից հեռացավ Գիտությունների ազգային ակադեմիայի պատմության ինստիտուտի գլխավոր գիտաշխատող, պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Գուրգեն Միքայելի Գեղամյանը:

Գուրգեն Գեղամյանը ծնվել է 1930 թ. մայիսի 30-ին Խանլար քաղաքում: Սկզբնական կրթությունը ստացել է տեղի միջնակարգ դպրոցում, որն ավարտել է 1948 թ.: 1949 թ. Գ. Գեղամյանն ընդունվել և 1954 թ. ավարտել է ԵՊՀ պատմության ֆակուլտետը: 1954 թվականից աշխատել է Թումանյանի (Ալավերդու) շրջանի Մղարթ գյուղում՝ որպես դպրոցի տնօրեն: - ԳԱ պատմության ինստիտուտի ասպիրանտուրան ավարտելուց հետո աշխատել է պատմության ինստիտուտում որպես ավագ գիտաշխատող (1967 թվականից), առաջատար գիտաշխատող (1974 թվականից), բաժնի վարիչ (1994–2005 թթ.), գլխավոր մասնագետ (2005 թվականից): 1963 թ. պաշտպանել է թեկնածուական ատենախոսություն «Հայաստանի կոլտնտեսային գյուղացիությունը 1953–1958 թթ.» թեմայով: Նրա դոկտորական ատենախոսությունը (1980 թ.) նվիրված էր Խորհրդային Հայաստանի 1920-ական թվականների սկզբի սոցիալ-տնտեսական և քաղաքական հիմնախնդիրներին («ՆԷՊ-ը և սոցիալ-տնտեսական փոփոխությունը Հայաստանում»): 1981 թ. ստացել է պրոֆեսորի կոչում: Գեղամյանը 1980 թվականից պատմության ինստիտուտի գիտական աստիճաններ շնորհող մասնագիտական խորհրդի անդամ էր: Համատեղության կարգով հայոց պատմություն էր դասավանդում ԵՊՀ-ում, ճարտարագիտական և Հր. Աճառյանի անվան համալսարաններում:

Մի շարք մենագրությունների հեղինակ էր, որոնցից են՝ «Սոցիալ-տնտեսական փոփոխությունը Հայաստանում ՆԷՊ-ի տարիներին (1922-1936 թթ.) մինչև 1974 թ.», «Սոցիալ-դասակարգային փոփոխությունը Սովետական Հայաստանում 60 տարում» (Երևան, 1982 թ.) և այլն: Գեղամյանը 60-ից ավելի գիտական հոդվածների հեղինակ է: Մասնակցել է «Հայ ժողովրդի պատմության» դպրոցական և բուհական դասագրքերի ստեղծման աշխատանքներին:

Գուրգեն Գեղամյանը վայելում էր մեծ սեր ու հարգանք ինչպես մասնագետ-պատմաբանների, դասախոսների, այնպես էլ հասարակության ամենալայն շրջաններում: Նա հմուտ պատմաբան էր, ինքնատիպ դասախոս, հրաշալի գործընկեր: Պրոֆ. Գեղամյանի հիշատակը միշտ վառ կմնա նրան ճանաչողների, հայ պատմաբանների սրտերում:

ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտ
«Ազգ», 31. V. 2011 թ.